

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. հունվարի 30-ի

նիստի /արձ.3/

1. Հաստատել արվեստագիտության բնագավառի ԺԷ.00.01 <<Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն>> մասնագիտության հեռակա ուսուցման ասպիրանտ Արթուր Տիգրանի Վարդիկյանի <<Արտավազ Փելեշյանի կինոպոետիկան >> վերնագրով թեկնածուական ատենախոսության թեման և աշխատանքային պլանը,

1.1 ԺԷ.00.01 <<Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն>> մասնագիտության հեռակա ուսուցման ասպիրանտ Ա. Վարդիկյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել արվեստագիտության թեկնածու, դոցենտ Գարեգին Վլադիմիրի Զաքոյանին և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատելու Գ. Զաքոյանի թեկնածությունը:

2. Հաստատել ինստիտուտի 2015թ. հաստիքացուցակը,

2.1 ԵԹԿՊԻ-ի 2015թ. հաստիքացուցակը ուժի մեջ համարել ս.թ. հունվարի 1-ից:

3. Հաստատել և ս.թ. հունվարի 30-ից ուժի մեջ համարել ԵԹԿՊԻ-ի ներքոհիշյալ ներբուհական կանոնակարգերը՝

ա) ԵԹԿՊԻ-ի մեթոդական խորհրդի կանոնակարգ,

բ) ԵԹԿՊԻ-ի ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն,

գ) ԵԹԿՊԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգ,

դ) ԵԹԿՊԻ-ի ամբիոնի կանոնադրություն,

ե) ԵԹԿՊԻ-ի <<Հանդես>> գիտամեթոդական ժողովածուի հրապարակվող հետազոտություններին ներկայացվող տեխնիկական և այլ չափանիշների հայեցակարգ,

3.1 հաստատել ԵԹԿՊԻ-ի մեթոդական խորհրդի ներքոհիշյալ կազմը՝

1. Նարինե Սարգսյան – ուս.-գիտ. գծով պրոռեկտոր - նախագահ

2. Աննա Երզնկյան – ղեկան

3. Էլմփաննա Հեքեքյան- դեկան
4. Արմեն Հարությունյան – դեկան
5. Արմինե Եղիազարյան - դեկան
6. Գոհար Հովհաննիսյան- գիտքարտուղար
7. Վերա Մարգարյան – ուս. մասի վարիչ
8. Էլեն Մանասերյան – իրավախորհրդատու

4. Հաստատել ԵԹԿՊԻ-ի մագիստրոսական թեզերին և ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները և գործողության մեջ դնել ս.թ. փետրվարի 1-ից,

4.1 ուժը կորցրած ճանաչել 06.12.2006թ. հաստատված ԵԹԿՊԻ-ի «Դիպլոմային աշխատանքների թեմաների տրման, կատարման ժամկետների, պաշտպանության թույլատրման ժամանակավոր կարգ >> -ի 2-րդ ենթաբաժինը:

5. Հանձնարարել ինստիտուտի հավատարմագրման գործընթացի նախապատրաստման աշխատանքներով զբաղվող հանձնախմբին ամիսը մեկ անգամ ռեկտորատում և գիտական խորհրդում զեկուցել կատարվող աշխատանքների ընթացքի մասին:

6. ԵԹԿՊԻ-ի 2015թ. ընդունելությունը նախապատրաստելու նպատակով նկարահանել ինստիտուտի ուսումնական գործընթացը լուսաբանող գովազդային տեսահոլովակներ և մարտի 31-ից տեղադրել ինստիտուտի ինտերնետային կայքում,

6.1 տեսահոլովակների նկարահանման աշխատանքներն իրականացնելու համար ինստիտուտի ուսանողների մասնակցությամբ ստեղծել ստեղծագործական խումբ Արվեստի կառավարման ամբիոնի վարիչ Ա. Ղուկասյանի ղեկավարությամբ:

7. Մշակույթի բնագավառի անվանի արվեստագետների հետ ինստիտուտի համագործակցությունն ընդլայնելու նպատակով հիմնել ԵԹԿՊԻ-ի պատվավոր պրոֆեսորների ակումբ: